



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ



OPEN SOCIETY
FOUNDATIONS

SIGRID RAUSING TRUST

ԶԵԿՈՒՅՑ

2016 թ. ԱՊՐԻԼԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ
ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱԶՈՐ

2016

Ձեկույցը պատրաստել է՝

Արմինե Սաղիկյան

Տեղեկատվությունը հավաքագրել են՝

Արմինե Սաղիկյան

Հասմիկ Կարապետյան

Մանե Մարուքյան

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների և Սիզբիդ Բոզինգ Թրասթի ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

2016 թ-ի ապրիլի 2-5-ը ժամանակահատվածում պատերազմական գործողությունները եւ նրանց հետեւանքով զոհված զինծառայողների մահվան հանգամանքները հանդիսացան հանրային լայն եւ թեժ քննարկումների թեմա: ԶԼՄ-ներով հրապարակվեցին տարբեր նյութեր, հոդվածներ եւ տեսանյութեր այդ պատերազմական գործողությունների վերաբերյալ, սակայն ռազմական գործողությունների հետեւանքով զոհված զինծառայողների մահվան հանգամանքների վերաբերյալ ամբողջական եւ ամփոփ տեղեկատվություն մինչ այժմ հրապարակված չէ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, ելնելով պետության կողմից իր քաղաքացիների կյանքի, առողջության եւ անվտանգության ապահովման եւ դրանց վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկման պարտականությունից, իրականացրել է 2016 թ-ի ապրիլի 2-5-ը ժամանակահատվածում պատերազմական գործողությունների (մինչեւ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության Գլխավոր շտաբերի պետերի կողմից հրադադարի հաստատումը¹) եւ դրանից հետո շարունակվող լարվածության հետեւանքով մահացության դեպքերի, հանգամանքների վերլուծություն, որի արդյունքները ներկայացվում է սույն զեկույցում:

2016 թ. ապրիլի 2-5-ը եւ ապրիլի 6-30-ն ընկած ժամանակահատվածներում մահացած զինծառայողների մահվան հանգամանքների վերաբերյալ պատկերը ամբողջացվել է նրանց ընտանիքներից, հարազատներից եւ ԶԼՄ-ներից ստացված տեղեկությունների համադրմամբ:

Ապրիլյան պատերազմական գործողությունների ժամանակահատվածում մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունների հիմնական աղբյուրը հանդիսանում էր ՀՀ պաշտպանության նախարարությունը: ՀՀ ՊՆ մամլո խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը իր ֆեյսբուքյան էջում պարբերաբար հրապարակում էր միայն զոհվածների անուն ազգանունը՝ ապրիլի 4-ից ապրիլի 30-ը ներկայացնելով 80 զոհված զինծառայողների տվյալներ:

ՀՀ ՊՆ կողմից 2016 թ. ապրիլի 13-ին հրապարակված տեղեկանքի համաձայն՝ ապրիլի 2-5 ժամանակահատվածում պատերազմական գործողությունների հետեւանքով զոհվել են 64 զինծառայող եւ 13 աշխարհագորային ու պահեստագորային,

¹ <http://life.panorama.am/hy/news/2016/04/06/ohanyan/465027>
<https://www.youtube.com/watch?v=gUqjTP7U6GU>

ընդհանուր թվով՝ 77 հոգի²: Տեղեկանքի հրապարակման ժամանակ Արգիշտի Գաբոյանը համարվում էր անհայտ կորած եւ ապրիլի 20-ին ճշտվեց մահվան փաստը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ մարմինների փոխանակման ժամանակ:

ՀՀ ՊՆ 12.07.2016 թ. ՊՆ/510-ԱՂ-462 գրությամբ կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն. «2016 թ-ի ապրիլի 1-5 ժամանակահատվածում արձանագրվել է 70 զինծառայողի մահվան դեպք, ապրիլի 6-12-ն ընկած ժամանակահատվածում՝ 7 մահվան դեպք, ապրիլի 13-30-ն ընկած ժամանակահատվածում 10 զինծառայողի մահվան դեպք՝ սահմանային միջադեպերի, անվտանգության եւ ճանապարհային երթուղիների կանոնների խախտման, ոչ կանոնադրային հարաբերությունների, դժբախտ պատահարների հետեւանքով»: Գրության մեջ առանձնացված չէ պատերազմական գործողությունների եւ հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահվան դեպքերի թիվը:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից 11.07.2016 թ-ի 19/852/1-16 գրությամբ կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն. «2016 թ. ապրիլի 1-5-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է մահվան 82 դեպք, որից 78-ը՝ հակառակորդի կողմից շփման գծում սպանություններ, 3-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելու հետեւանքով մահեր, 1-ը՝ դժբախտ պատահար: 2016 թ. ապրիլի 6-12-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է մահվան 13 դեպք, որից 3-ը՝ հակառակորդի կողմից շփման գծում սպանություններ, 2-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանքով մահեր, 1-ը՝ մարտական հերթապահություն կրելու կանոնների խախտման հետեւանքով մահ, 4-ը՝ սպանություններ, 1-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելու հետեւանքով մահ, 2-ը՝ վթարի հետեւանքով մահ: 2016 թ. ապրիլի 13-30-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է մահվան 16 դեպք, որից 9-ը՝ հակառակորդի կողմից շփման գծում սպանություններ, 3-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանքով մահեր, 1-ը՝ մարտական հերթապահություն կրելու կանոնների խախտման հետեւանքով մահ, 1-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելու հետեւանքով մահ, 1-ը՝ վթարի հետեւանքով մահ, 1-ը՝ դժբախտ պատահար»:

² <http://www.mil.am/hy/news/3990>

Աղյուսակ 1. 2016 թ. ապրիլ ամսին զոհված զինծառայողների թիվն ըստ ժամանակահատվածների

| Ժամանակահատված | Զինդատախազության գրություն | | ՀՀ ՊՆ գրություն | | ՀՀ ՊՆ մամուլ խոսնակի ֆեյսբուքյան էջ | ՀՔԱՎ-ի եւ ՋԼՄ տվյալներ | | |
|-----------------|----------------------------|--------------------|-----------------|-----------|-------------------------------------|------------------------|------------|--------------------|
| | Ընդհանուր | Հակառակորդի կողմից | Ընդհանուր | Ընդհանուր | | Հակառակորդի կողմից | Ընդհանուր | Հակառակորդի կողմից |
| Ապրիլի 1-5* | 82 | 78 | 70 | 89** | 78** | 12 | 80 | 78 |
| Ապրիլի 6-12 | 13 | 3 | 7 | - | - | 55 | 12 | 5 |
| Ապրիլի 13-30 | 16 | 9 | 10 | - | - | 13 | 14 | 11 |
| Ընդամենը | 111 | 90 | 87 | 89 | 78 | 80 | 106 | 94 |

* 2016 թ-ի ապրիլի 1-ին արձանագրվել է մահվան 1 դեպք:

** ՀՀ ՊՆ տեղեկանքում մահացության թվերը ներկայացված են աղյուսակում նշված ժամանակահատվածներին ոչ համապատասխան, այդ պատճառով ներկայացնում ենք ընդհանուր թվերը ապրիլ ամսվա համար:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 2016 թ. ապրիլի 2-5-ը ժամանակահատվածում պատերազմական գործողությունների հետեւանքով զոհված զինծառայողների թիվը կարելի է մեծ ճշտությամբ համարել 77 հոգի (մեկ հոգին զոհվել է ապրիլի 1-ին): Նկատենք, որ ՀՀ կենտրոնական զինվորական դատախազության կողմից տրամադրած տվյալների՝ ապրիլ ամսվա ընթացքում մահացածների ընդհանուր թիվը 111 է, այսինքն 21 հոգի մահացել է ոչ մարտական գործողությունների հետեւանքով:

Այսպիսով, նույնիսկ պատերազմական գործողությունների ժամանակ զինված ուժերում շարունակվել են կանոնադրային հարաբերությունների, դժբախտ պատահարների հետեւանքով մահացության դեպքերը /մահացությունների ընդհանուր թվի մոտ 20 տոկոսը/:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները զոհված զինծառայողների մահվան հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու նպատակով հանդիպել են 2016 թ. ապրիլ ամսին մահացած 94 զինծառայողներից 61-ի ընտանիքների հետ:

Նշված 61 ընտանիքները բնակվում են 8 մարզերում՝ Արմավիր, Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Տավուշ եւ Երեւան քաղաքում /տե՛ս քարտեզ 1/: 61 ընտանիքներից 13-ը բնակվում են Երեւան քաղաքում, 22-ը նշված մարզերի քաղաքային եւ 26-ը գյուղական համայնքներում:

արձակված արկի հետեւանքով, իսկ ըստ ՊՆ-ի՝ հակառակորդի կրակոցից:³ Ըստ ԳԱԼԱ լրատվական կայքի՝ «20-ամյա Վլադիմիր Մելքոնյանը մահացել է ապրիլի 1-ի թեժ մարտերի առաջին իսկ հարվածներից»:⁴

Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ արդեն իսկ 2016 թ-ի ապրիլի 1-ին բաժանարար գծում իրավիճակը լարված է եղել, եւ կարելի էր կանխատեսել հնարավոր ռազմական գործողությունների թեժացումը:

Ըստ օրերի զոհերի թիվը (տե՛ս աղյուսակ 2), ցույց է տալիս, որ առավել մեծ թվով զոհեր եղել են ապրիլի 2-ին՝ պատերազմական գործողությունների առաջին իսկ օրը, որը կազմում է մեր կողմից այցելած զոհվածների կեսը, որը վկայում է պատերազմական գործողություններին ոչ պատշաճ պատրաստվածության մասին:

Աղյուսակ 2. Մահվան դեպքերի թիվն ըստ օրերի

| Ամսաթիվ | Քանակ |
|-----------------|-----------|
| 01.04.2016 | 1 |
| 02.04.2016 | 21 |
| 03.04.2016 | 9 |
| 04.04.2016 | 12 |
| 05.04.2016 | 2 |
| 06.04.2016 | 4 |
| 07.04.2016 | 2 |
| 08.04.2016 | 1 |
| 11.04.2016 | 1 |
| 12.04.2016 | 1 |
| 19.04.2016 | 1 |
| 21.04.2016 | 1 |
| 25.04.2016 | 1 |
| 26.04.2016 | 2 |
| 30.04.2016 | 1 |
| 03-06.04.2016 | 1 |
| Ընդամենը | 61 |

} 44

³ <http://www.mil.am/hy/news/3957>

⁴ <http://galatv.am/hy/news/2-20-3/>

2016 թ. ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ 30-Ը ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ՄԱՀՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ


61 մահացած զինծառայողների ընտանիքներից 23-ի հարազատներն իրենց հարազատի մահվան մասին տեղեկացել են տարածքային զինկոմիսարիատի աշխատակիցներից՝ հիմնականում հեռախոսազանգի կամ այցելության միջոցով եւ միայն մի դեպքում են հարազատներին հայտնել մահվան պատճառի մասին: 6 զինծառայողի զոհվելու մասին ընտանիքին հայտնել են գյուղապետարանից կամ քաղաքապետարանից՝ առանց որեւէ մանրամասներ նշելու, 5-ի հարազատներն իմացել են իրենց հարազատի անհայտ կորչելու մասին անհայտ կորածների ցուցակի հրապարակումից: 13 զինծառայողի հարազատներն անձամբ են մեկնել դեպքի վայր կամ նրանց բարեկամներն են հետաքրքրվել եւ հայտնել դեպքի մասին, 1 զինծառայողի հարազատներն իմացել են լրատվամիջոցից եւ որոշ ժամանակ անց զինկոմիսարիատից: 13 զոհված զինծառայողների ընտանիքները կամ չեն հիշում կամ չեն հայտնում տեղեկատվության աղբյուրը:

Այսպիսով, 61 զոհված զինծառայողներից միայն 29-ի հարազատներն են ստացել պաշտոնական տեղեկատվություն մահվան փաստի վերաբերյալ եւ նրանցից միայն 2-ն են իմացել մահվան հնարավոր պատճառի մասին, բայց մահվան վայրի, հանգամանքների վերաբերյալ որեւէ ընտանիք պաշտոնական տեղեկատվություն չի ստացել:

Հարկ է նշել, որ 13 զոհված զինծառայողների հարազատները, ծնողները սեփական նախաձեռնությամբ այցելել են դեպքի վայր, փորձել տեղեկություններ ստանալ զինծառայակիցներից եւ այլ հնարավոր աղբյուրներից: Որոշ ընտանիքներ դեռեւս չէին այցելել դեպքի վայր, սակայն մտադրություն ունեին սեփական նախաձեռնությամբ պարզել իրենց հարազատի մահվան հանգամանքները:

Քարտեզ 2-ում ներկայացված է զոհված 94 զինծառայողների մահվան վայրերը եւ նրանցից այն 61 զինծառայողների մահվան վայրերը, որոնց հարազատների հետ հանդիպել են կազմակերպության աշխատակիցները:

Քարտեզ 2. 2016 թ. ապրիլին պատերազմական գործողությունների, հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով եւ այլ պատճառներով մահվան վայրերը



Ինչպես տեսնում ենք մահվան վայրերը պատկերող քարտեզից, պատերազմական գործողությունների հետևանքով զոհերը տեղի են ունեցել բաժանարար գծի հյուսիսարևելյան եւ հարավ-արևելյան հատվածներում՝ Թալիշի, Մարտակերտի եւ Ջաբրայիլի տեղանքներում:

Ստորև ներկայացվում է ըստ ժամանակահատվածների զինձառայողների մահվան հանգամանքների վերաբերյալ կազմակերպության կողմից ձեռք բերված տեղեկությունները.

2016 թ-ի ապրիլի 2-5-ը ընկած ժամանակահատված

Ինչպես նշել ենք, հանդիպել ենք այս ժամանակահատվածում պատերազմական գործողությունների հետևանքով զոհված 44 զինձառայողների ընտանիքներին: 44-ից 4 ընտանիքի անդամները նախընտրեցին տեղեկություն չհայտնել կամ ներկայացնում էին

շատ ընդհանուր տեղեկություններ: 44 ընտանիքից 23-ն են ստացել պաշտոնական տեղեկատվություն /զինկոմիսարիատից, գյուղապետարանից կամ քաղաքապետարանից/ իրենց հարազատի մահվան փաստի մասին: 23-ից մեկի վերաբերյալ հարազատներին նաև հայտնել են, որ մահացել է ծառայակիցների մարմինները ռազմադաշտից դուրս բերելու ընթացքում, իսկ մյուսի դեպքում նաև նշել են, որ մահացել է ականի պայթյունից, սակայն ինչ հանգամանքներում՝ տեղյակ չեն: 9 ընտանիք տեղեկացել է իրենց հարազատի զոհվելու վերաբերյալ տարբեր ոչ պաշտոնական աղբյուրներից՝ ծանոթներ, հարազատներ, ծառայակիցներ: 5 ընտանիք իրենց հարազատի ճակատագրի մասին սկզբում տեղեկացել է ՁԼՄ-ներով տարածված 18 անհայտ կորած զինծառայողների ցուցակի հրապարակումից, իսկ մահվան փաստի մասին վերջիններիս մարմինները Միջազգային Կարմիր խաչի աջակցությամբ փոխանակումից հետո:

Այսինքն, նշված 44 զոհված զինծառայողներից միայն մեկի ընտանիքը քիչ թե շատ տեղյակ է հարազատի զոհվելու հանգամանքների մասին:

Պատերազմական գործողությունների հետևանքով զոհված 2 զինծառայողի հարազատները հայտնել են, որ վստահ չեն, որ իրենց որդու մարմինը եղել է դազադում, նրանցից մեկի մայրը պնդեց, որ իր որդու դազադի մոտ 3 օր հերթապահել են ոստիկանության աշխատակիցները՝ թույլ չտալով բացել դազադը:

2016 թ-ի ապրիլի 6-ից 30-ը ընկած ժամանակահատված

Հանդիպել ենք այս ժամանակահատվածում պատերազմական գործողությունների հետևանքով զոհված 9 զինծառայողների ընտանիքների հետ: 9 ընտանիքներից 1 ընտանիքի անդամները նախընտրեցին տեղեկություն չհայտնել կամ ներկայացնում էին շատ ընդհանուր տեղեկություններ, 6 ընտանիք են ստացել պաշտոնական տեղեկատվություն /զինկոմիսարիատից, գյուղապետարանից կամ քաղաքապետարանից/ իրենց հարազատի մահվան փաստի մասին:

Ելնելով ապրիլի 2-30-ը ընկած ժամանակահատվածում զոհված 53 զինծառայողների ընտանիքների, հարազատների հետ մեր հանդիպումների արդյունքում ստացված տեղեկություններից՝ կարող ենք արձանագրել, որ 2016 թ-ի մայիս-հունիս ամիսների դրությամբ պատերազմական գործողություններից առնվազն 2 ամիս հետո:

- 53 գոհված զինծառայողների որևէ մեկի ընտանիքը ամբողջական տեղեկատվություն չունի իրենց հարազատի մահվան հանգամանքների վերաբերյալ:

Մտորել ներկայացվում են առանձին դեպքերի նկարագրությունը 2016 թ-ի ապրիլի պատերազմական գործողությունների ընթացքում զինծառայողների մոտ զենք-զինամթերքի ոչ բավարար քանակի, ինչպես նաև աջակցող ուժերի բացակայության կամ ուշանալու վերաբերյալ.

1. Զինծառայող 1, գոհվել է Մարտակերտում, 2016 թ. ապրիլի 2-ին: Զինծառայողի հարազատները գոհերի մեծ թիվը կապում են սպառազինության, զենք-զինամթերքի անբավարար քանակի, ինչպես նաև պատերազմական գործողությունների սկսման վերաբերյալ հետախուզական տվյալների վերաբերյալ տեղեկատվության բացակայության հետ: Ըստ հարազատների՝ հակառակորդ կողմը հաճախ է տանկերն առաջ բերում, որի հետևանքով դատարկվում են սահմանակից գյուղերը:

2. Զինծառայող 2, գոհվել է Ջաբրայիլում, 2016 թ. ապրիլի 2-ին: Հարազատները եղել են գոհվելու վայրում եւ իրենց ստացած տեղեկությունների համաձայն՝ այդ հատվածում ծառայած զինվորներից ոչ-ոք ողջ չի մնացել, քանի որ եղել են անպատրաստ, բավարար քանակով զենք չեն ունեցել դիմակայելու համար: Նրանց ուղղությամբ հակառակորդի տանկերը առաջ են եկել, որը հնարավոր չէր չնկատել: Զինծառայողի հարազատները միտումնավորություն են տեսնում, նրանում, որ որևէ ջանք չի գործադրվել դիրքերն ամրացնելու համար, զինծառայողներին անհրաժեշտ զինամթերքով ապահովելու համար: Ըստ նրանց՝ Ջաբրայիլում «բարձիթողի վիճակ է եղել, տանկերը եղել են անսարք վիճակում: Կուրաթլուից Ջաբրայիլ տանող ճանապարհին բավականին շատ անսարք տանկեր են կանգնած եղել, որոնցից շատերի մեջ վառելիքի փոխարեն ջուր է լցված եղել, երբ շարժիչը միացրել են, որ առաջնագիծ մեկնեն, շարժիչը խափանվել է»: Զինծառայողի հարազատների հետ հանդիպած զինակիցները հայտնել են, որ «ասելիք» շատ ունեն, սակայն ծառայության մեջ գտնվելու ընթացքում չեն կարող խոսել այդ մասին:

3. Զինծառայող 3, գոհվել է Ջաբրայիլում, 2016 թ. ապրիլի 2-ին: Հարազատները հայտնել են, որ պատերազմական գործողությունների ժամանակ իրենց որդին բավարար քանակով ռազմամթերք չի ունեցել, որի պատճառով մեծ թվով գոհեր են եղել:

4. Զինծառայող 4, գոհվել է Ջաբրայիլում, 2016 թ. ապրիլի 2-ին: Հարազատները հայտնել են, որ հանկարծակի եկած զինծառայողները երկար ժամանակ մարտի են բռնվել

հակառակորդի հետ, մինչև ապրիլի 2-ի առավոտյան ժամը 7:30 կապ են հաստատել հրամանատարական շտաբի հետ՝ խնդրելով աջակցել եւ հայտնել հետագա գործողությունների մասին, բայց որեւէ պատասխան եւ հրահանգ չեն ստացել:

5. Զինճառայող 5, գոհվել է Թալիշում, 2016 թ. ապրիլի 2-ին: Հոր խոսքերով՝ որդին իր զինվորների հետ միանգամից սկսել է Թալիշի դիրքերի հետ գրավումը, հաջողությամբ իրականացրել են 2 դիրքերի գրավումը, որից հետո որդու զենքը՝ գնդացիրը, փչացել է, խցանվել, նա խնդրել է մյուս գնդացրորդին, որպեսզի վերցնի մյուսի զենքը և մարտի դուրս գա, սակայն բացասական պատասխան ստանալով՝ գիշերը փոքր լապտերի լույսի ներքո քանդել և վերանորոգել է զենքը՝ մյուսների հետ դուրս գալով երրորդ ամենակարևոր դիրքի գրավմանը, որը եղել է բարձունքի վրա: Զինճառայողի սպանվելուց հետո նրա ծառայակիցները գրեթե գրաված են եղել վերոհիշյալ դիրքը, սակայն հրաման են ստացել հետ նահանջի և հետ են եկել: Մինչ այժմ, ըստ զինճառայողի հոր հայտնած տեղեկատվության, այդ դիրքը գտնվում է հակառակորդի հսկողության տակ:

6. Զինճառայող 6, գոհվել է Ջաբրայիլում, 2016 թ. ապրիլի 2-ին: Հայրը իր ղեկավարությունն է հայտնել սպառազինության անբավարար քանակից, զինտեխնիկայի անբարեկարգ վիճակից: Նա ապրիլի 2-ից մինչև ապրիլի 10-ը գտնվել է Արցախում եւ անձամբ տեսել է՝ ինչ է կատարվել: «Տանկերն ինչի՞ չգնացին էնտեղ կռիվ տալու, քանի որ ակումբատոր չունեին, եւ քանի որ դրանք շուկաներում վաճառքի են դրված: ԲՄՊ-ները չեն կարողացել մինչև վերջ հասնել, քանի որ վառելիքի փոխարեն լցված են եղել ջրով: Կամավորներին չեն կարողացել ապահովել անհրաժեշտ քանակի փամփուշտներով՝ կարողացել են հատկացնել 60 հատ փամփուշտ յուրաքանչյուրին, որն ընդամենը 1,5 ըոպե հետո կարող է ավարտվել:

7. Զինճառայող 7, գոհվել է Ջաբրայիլում, 2016 թ. ապրիլի 2-ին: Ծառայակիցները ծնողին պատմել են, որ 19-րդ բարձունքում որդին մի զինճառայողի հետ կռվել են մինչև ապրիլի 2-ի առավոտյան ժամը 9-ի կողմերը: Նա միայնակ շարունակել է կռվել՝ հետ ուղարկելով զինակցին: Հայրը այն կարծիքին է, որ լավ պատրաստված լինելու, բանակի միջոցները մսխած չլինելու ու բավականաչափ զինտեխնիկա ունենալու դեպքում վիճակն այլ կերպ կարող էր լինել:

8. Զինճառայող 8, գոհվել է Ջաբրայիլում, 2016 թ. ապրիլի 3-ին: Մարտի է բռնվել 1970-ականների արտադրության տանկով հակառակորդի 5 տանկի դիմաց, որոնց, ըստ հարազատների նա խոցել է: Զինճառայողի եղբոր ունեցած տվյալների՝ նա և նրա

անձնակազմը եղել են 321 համարի տանկով, որը եղել է հենց զինծառայողին կցված տեխնիկան, սակայն զինծառայողը մահացել է այլ տանկի մեջ:⁵

9. Զինծառայող 9, զոհվել է Մարտակերտում, 2016 թ. ապրիլի 2-ին: Հարազատները հայտնում են, որ իրենց որդին եւ ծառայակիցները զոհվել են, անհամեմատ մեծ թվով հակառակորդին դիմակայելու համար անհրաժեշտ քանակի զինամթերք չունենալու հետեւանքով:

10. Զինծառայող 10, զոհվել է Թալիշում, 2016 թ. ապրիլի 4-ին: Հարազատները մահվան պատճառ են համարում սխալ հրամանը՝ նշելով, որ «վերններում գիտեն ինչ է կատարվում»:

11. Զինծառայող 11, զոհվել է Թալիշում, 2016 թ. ապրիլի 2-ին: Հարազատներն իրենց որդու զոհվելու հետ կապված նշում են, որ զինամթերքը վերջացել է եւ չի ապահովվել նոր զինամթերքի մատակարարում:

12. Զինծառայող 12, զոհվել է Մարտակերտում, 2016 թ. ապրիլի 26-ին: Զինծառայողի ծնողները հանդիպել են հրամանատարի հետ եւ հարցրել, թե ինչու մարտական դիրքի 3-րդ գծում գտնվող իրենց որդին այդ պահին զրահաբաճկոնով չի եղել, որին ի պատասխան վերջինս հայտնել է, թե դրանց քանակը քիչ է, այդ պատճառով էլ նախ առաջնագծի տղաներին են ապահովում: Ծնողները վստահ են, որ նույնիսկ այդ բոլոր իրադարձություններից հետո զինծառայողները ապահովված չեն անվտանգության միջոցներով:

Զինծառայողների մահվան հանգամանքների, զենք-զինամթերքի կամ զինված ուժերում պատշաճ պայմանների բացակայության մասին ԶԼՄ նյութերով մահվան հանգամանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև:

1. «Արաբո» ջոկատի հրամանատար Մանվել Եղիազարյանը, ով որպես կամավորական գտնվել է Ղարաբաղում, հայտնել է, որ սահմանային դիրքերը կարգի բերելու անհրաժեշտություն ունեն, քանի որ խրամատները հիշեցնում են «Հայրենական մեծ պատերազմի ժամանակները»: Նա խոսում է գումարները մսխելու մասին, անպարենպաստ կարգի չեն բերվել բազմաթիվ ճանապարհներ, որոնցով վիրավոր զինվորներին տեղափոխելը պարզապես անհնար է: Բացի այդ, ըստ Եղիազարյանի, «գրեթե կապ չկա» Մատաղիսում, Թալիշում, Մարտակերտում, անհրաժեշտության

⁵ <https://www.youtube.com/watch?v=nTpMuMwFGto>

դեպքում հնարավոր չէ հեռախոսով կապվել մարտական ընկերների հետ: Նույն խնդրների մասին խոսել է նաև կամավորական Ռազմիկ Պետրոսյանը:⁶

2. Պահեստագործի գեներալ Գագիկ Մելքոնյանը եւս նշել է, որ եթե զենքերը լինեն արդիական, ապա հնարավոր կլինեն զոհերից խուսափել:⁷
3. Նախկին հետախույզ Գևորգ Ազոյանը պատասխանելով այն հարցին, թե ինչն⁸ մինչև հարձակումը հնարավոր չի եղել նախանշել հակառակորդի զորքերի և զինտեխնիկայի տեղաշարժը, որպեսզի, ինչպես զինվորներն են հաճախ ասում, չենթարկվեին անակնկալ հարձակման, երկարամյա հետախույզն ասաց՝ շատ նրբություններ կան, որոնց մասին չի ցանկանում խոսել: Նա հրամայական է համարում բանակի գումարը որոշ պաշտոնյաներից՝ ընդգծելով. «Որոշ գենաստավից, որոշ մամայի բալաններից, ովքեր իրենց ծանոթ-քեռի-բարեկամի հաշվին դարձել են գնդապետներ, բայց կյանքում շտաբից դուրս չեն եկել: Դրանք պետք է քոքից մաքրվեն, այո, հենց դեկավար կազմից, արդեն լճացել ա, պետք է մաքրվի, գտվի: Բանակում պետք է լինեն մարտունակ տղաներ: Բերում են մի հատ ջահել տղա են դնում՝ էսինչ գեներալը քեռին ա, էսինչ վարչության պետի ախպոր տղեն ա, քավոր, սանիկ, դե բնական ա՝ տենց էլ պետք ա լինի՝ կյանքում նախարարությունից դուրս չի եկել, հեռախոսով հրաման ա տալիս . . . հլը մի հատ արի տես, ինչ հրաման տվել էս՝ արդյո՞ք դա բռնում ա էնտեղի աշխարհագրական դիրքին, կլինի-չի լինի. . .»:⁸
4. Փոխգնդապետ Ալեքսան Առաքելյանի հայրը նշում է բազմաթիվ թերությունների մասին:⁹ Մասնավորապես նա ընդգծում է. «Ինքը իմ տղուս ուղարկեց մսադացի տակ, ինքը պետք է պատասխան տա: Տանկի ակումյատորներն ո՞վ ծախեց կերավ՝ Հովիկ Աբրահամյանը, ԵՄՈՒ-ների մեջ որ սայլարկի փոխարեն ջուր էր, ո՞ւմ շնորհքն է՝ Հովիկ Աբրահամյան: Գումարտակի, գնդի մեջի խոզերն օր ման գուկան, ո՞ւմ խոզերն են՝ կամանդիրի»:¹⁰ Զինճառայողները բազմիցս են նշել, որ եթե լավ զինտեխնիկա ունենային, չէին վիրավորվի:¹⁰ Իսկ փափուշտների վերջանալու եւ ոչ ժամանակին դրանց համալրման մասին իրենց հարցազրույցներում նրանք բազմիցս են նշել՝ ընդգծելով, որ հակառակ դեպքում իրավիճակն այլ կլիներ եւ զոհերի թիվը ավելի քիչ կարող էր լինել:¹¹

⁶ <http://www.azatutyun.am/a/27701546.html>

⁷ <https://www.youtube.com/watch?v=GrQ59Bx-7eg>

⁸ <http://www.azatutyun.mobi/a/27686254.html>

⁹ <https://www.youtube.com/watch?v=wQM9FB9Q-As>

<http://galatv.am/hy/news/16-18-2/>

¹⁰ <https://www.youtube.com/watch?v=GrQ59Bx-7eg>

¹¹ <https://www.youtube.com/watch?v=vznTnqOEBqg>

5. Զոհված զինծառայող 19-ամյա Արման Անդրեասյանի հարազատները եւս պնդում են, որ զինծառայողները բավականաչափ զենք չեն ունեցել պաշտպանվելու համար կամ զինծառայողները կռվել են 80-ականների զենքով:¹²
6. Ապրիլյան պատերազմական գործողությունների ընթացքում խնդիրների ու թերությունների մասին կարծիք է հայտնել նաեւ ԱԺ ներկայացուցիչներից պատգամավոր Հրանտ Բագրատյանը՝ առանձնացնելով սահմանի երկայնքով զիջերային սարքերի բացակայությունից, հեռահաղորդակցության հնացած միջոցներից, որը տեղիք է տալիս լրացուցիչ գոհերի:¹³
7. Հակառակորդի հարձակմանն անդրադարձել է նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Bloomberg գործակալությանը տված իր հարցազրույցում, որտեղ նշում է. «Ստույգ տեղեկություններ, անշուշտ, չունեինք, որ ապրիլի 1-ը կարող է այդպիսի իրադարձությունների սկիզբ դառնալ, և եթե իհարկե ունենայինք, ադրբեջանցիները շատ-շատ մեծ կորուստներ կկրեին, և այս մի քանի մետրը, որ իրենք գրավել են, դա էլ չէին կարողանա գրավել»:¹⁴ Մինչդեռ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հայտարարել է, որ Հայաստանը ունեցել է հետախուզական տվյալներ Լեռնային Ղարաբաղի վրա Ադրբեջանի հնարավոր հարձակման մասին:¹⁵

Զոհված զինծառայողների ընտանիքների կողմից հայտնած եւ լրատվական միջոցներով ներկայացված տեղեկությունների վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ պատերազմական գործողությունների ընթացքում առկա են եղել հետեւյալ խնդիրները.

1. զինտեխնիկայի անսարքություն,
2. զինվորական մեքենաների վառելիքով չապահովվածություն,
3. զինամթերքի անբավարար քանակ եւ համալրման բացակայություն,
4. աջակցող ուժերի ուշացում,
5. հետախուզական տվյալների բացակայություն,
6. դիրքերի ոչ պատշաճ ամրացում:

¹² <https://www.youtube.com/watch?v=QAFQlp95Oto>

¹³ <http://yelaket.am/?p=4285&l=am>

¹⁴ <http://www.panorama.am/am/news/2016/04/25/%D5%8D%D5%A5%D6%80%D5%AA-%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6-Bloomberg/1568915>

¹⁵ <http://armlur.am/512970/>

Առանձին ուսումնասիրության խնդիր է հանդիսանում գոհված/մահացած զինծառայողների հարազատների տրամադրած տեղեկատվությունը պատերազմական գործողությունների ընթացքում իրենց հարազատի վիրավորվելու եւ ոչ ժամանակին տրամադրված բժշկական օգնության բացակայությունը:

Մեր կողմից այցելությունների ընթացքում առնվազն 3 ընտանիք հայտնել է տեղեկություններ այն մասին, որ իրենց հարազատը վիրավորվել է եւ բուժօգնության մեքենայի անսարքության պատճառով չեն կարողացել տեղափոխել համապատասխան վայր պատշաճ բժշկական օգնություն տրամադրելու համար:

Մասնավորապես՝

1. 2016 թ-ի ապրիլի 1-ին հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահացած Վլադիմիր Աշոտի Մելքոնյանի եղբոր ունեցած տեղեկություններով, երբ Վլադիմիրը վիրավորվել է, նրան փորձել են դիրքերից իջեցնել բուժօգնության մեքենայով՝ հոսպիտալ տեղափոխելու նպատակով: Զինծառայողն ամբողջ ընթացքում եղել է գիտակից վիճակում, և մեքենայի անսարքության պատճառով հնարավոր չի եղել ժամանակին պատշաճ բժշկական օգնություն ցուցաբերել: Դիրքերից իջնելու ճանապարհին բուժօգնության մեքենան փչացել է, Վլադիմիրի ծառայակիցները ձեռքերի վրա պատգարակը իջեցրել են դիրքերից: Կես ճանապարհին բուժօգնության մեքենան կրկին հասել է տղաներին, և Վլադիմիրին մեքենայի մեջ են տեղավորել, իջել դիրքերից, սակայն 1,5 ժամ առանց բժշկական օգնության մնալուց հետո՝ ներքին և արտաքին արյունահոսությունների պատճառով Վլադիմիրը մահացել է:
2. 2016 թ-ի ապրիլի 26-ին հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով Մարտակերտում վիրավորված Տիգրան Մխիթարի Պողոսյանին, ըստ ծնողի կողմից տրամադրված նախնական տվյալների՝ փորձել են տեղափոխել հոսպիտալ շտապօգնության մեքենայով, սակայն մի քանի անգամ մեքենան փչացել է եւ մահացել է ճանապարհին հեմորագիկ շոկից: Սակայն, ըստ հետազայում տրամադրված տեղեկության՝ Տիգրան Մխիթարի Պողոսյանը մահացել է հոսպիտալում:
3. 2016 թ. ապրիլի 26-ին հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով զինծառայող Հայկ Սամվելի Մինասյանը վիրավորվել է եւ մինչ մահանալը 5 ժամ բուժօգնություն չի ցուցաբերվել, որի հետեւանքով մահացել է:

Այսպիսով, ելնելով նշված տվյալներից 2016 թ-ի ապրիլին հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով առնվազն 3 զինծառայող մահացել են պատշաճ բժշկական

օգնություն չտրամադրելու հետեւանքով: Այսինքն՝ զինված ուժերում մտահոգիչ է նաև պատշաճ բժշկական օգնության տրամադրման վիճակը, հատկապես պատերազմական և արտակարգ իրավիճակներում:

ԶՈՆՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

61 գոհված զինծառայողների ընտանիքների գերակշիռ մասը բնակվում է սոցիալապես անապահով պայմաններում, ոմանք՝ առավել ծանր պայմաններում: Այցելություններ կատարած 61 ընտանիքներից.

- 12-ի չափահաս անդամներից մեկն ունի մշտական աշխատանք պետական համակարգում /դպրոց, ՊՆ, հիվանդանոց, սպասարկման ոլորտ/,
 - որոնցից 4-ն ունեն նաև արտագնա աշխատանքի մեկնող,
 - 1-ն ունի նաև թոշակառու անդամ,
 - 2-ը նաև մասնավոր համակարգում աշխատող,
- 5 ընտանիքի անդամներից մեկը աշխատում է միայն մասնավոր համակարգում /խանութ, շուկա եւ այլն/,
- 15 ընտանիքի հիմնական ապրուստը արտագնա աշխատանքի միջոցով է ապահովվում, որոնցից մի ընտանիք նաև ունի թոշակառու,
- 10 ընտանիք ունի ոչ մշտական աշխատանք,
- 14-ը որեւէ տեսակի աշխատանք չունի,
 - որոնցից միայն 1 ընտանիք ստանում է ընտանեկան նպաստ,
 - 6 ընտանիքի ապրուստի միակ միջոց է հանդիսանում ընտանիքի անդամների ծերության կամ հաշմանդամության թոշակը:

Այսպիսով, 61 գոհված զինծառայողների ընտանիքներից միայն 17-ը ունի մշտական ֆինանսական եկամուտ 1 աշխատողի աշխատավարձի հիման վրա, 12-ը բյուջետային հիմնարկում, 5-ը՝ մասնավոր ոլորտում, որը սակայն բավարար չէ ընտանիքի ֆինանսական կարիքները բավարարելու համար:

14 ընտանիք ընդհանրապես աշխատանք չունի, այդ թվում 6 ընտանիքի ֆինանսական միջոցներ են հանդիսանում ծերության կամ հաշմանդամության թոշակը, 1-ինը՝ ընտանեկան նպաստը:

Մնացած 30 ընտանիքները գոյատևում են արտագնա եւ ոչ մշտական աշխատանքների շնորհիվ:

Հաշվի առնելով ընտանիքի անդամներ թիվն ըստ ֆինանսական եկամուտների աղբյուրների՝ (տե՛ս աղյուսակ 3) տեսնում ենք, որ 61 մահացած զինծառայողների ընտանիքները գերազանցապես սոցիալապես անապահով են:

Աղյուսակ 3. 2016 թ. ապրիլ ամսին գոհված 61 զինծառայողների ընտանիքների անդամների թիվն ըստ զբաղվածության

| Ընտանիքում անձանց թիվը | Բյուջետային հիմնարկում աշխատանք ունեցող ընտանիքների թիվը | Մասնավոր ոլորտում աշխատանք ունեցող ընտանիքների թիվը | Աշխատանք չունեցող ընտանիքների թիվը | Արտագնա և ոչ մշտական աշխատանք ունեցող ընտանիքների թիվը | Ընդամենը |
|------------------------|--|---|------------------------------------|--|-----------|
| 1 | | | 1 | | 1 |
| 2 | 2 | 1 | 2 | 4 | 9 |
| 3 | 4 | 2 | 3 | 12 | 21 |
| 4 | 2 | | 3 | 6 | 11 |
| 5 | 1 | 2 | 3 | 3 | 9 |
| 6 | 1 | | 1 | | 2 |
| 7 | 2 | | | 2 | 4 |
| 11 | | | 1 | 1 | 2 |
| 12 | | | | 1 | 1 |
| 13 | | | | 1 | 1 |
| Ընդամենը | 12 | 5 | 14 | 30 | 61 |

Զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները

Զինծառայողների ընտանիքները հիմնականում ունեն բնակարանային խնդիրներ: Նույնիսկ սեփական բնակարանում կամ առաձնատներում բնակվող ընտանիքների կացարանները կարիք ունեն վերանորոգման կամ բարեկարգման:

Այսպես, կազմակերպության կողմից այցելված 61 ընտանիքներից.

- 32-ը բնակվում են սեփական տներում, որոնցից 10-ը գտնվում են ծայրահեղ անբարենպաստ պայմաններում՝ կիսաշեն, խարխուլ, գուրկ տարրական կենցաղային պայմաններից,
- 17-ը բնակվում են բազմաբնակարան շենքերում, որոնցից 2-ը ծայրահեղ անբարենպաստ պայմաններում,
- 3-ը բնակվում են ժամանակավոր կացարաններում,
- 3-ը վարձակալված բնակարանում,
- 1 ընտանիք բնակվում է համայնքին պատկանող նախկին ճաշարանի շենքում,
- 1 ընտանիք սեփական կացարան չունենալու պատճառով բնակվում է հարազատների տանը,
- 4 ընտանիք բնական չունի եւ բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում:

Ըստ բնակարանային պայմանների Հայաստանում բնակվող 57 ընտանիքներից 20-ը /35 տոկոսը/ բնակվում են անբարենպաստ բնակարանային պայմաններում:

**ԶՈՂՎԱԾ ԵՎ ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԱԿՈՉՎԵԼՈՒ ԵՎ ԶԻՆՏԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Զինձառայողների հարազատներին այցելության ընթացքում անդրադարձել ենք նաև մինչ գորակոչվելը եւ զինձառայության ընթացքում նրանց ունեցած առողջական խնդիրներին:

61 զինձառայողներից 15-ը, ըստ հարազատների, ունեցել են առողջական խնդիրներ, ընդ որում 11-ն այդ խնդիրներն ունեցել են մինչև գորակոչը, որոնք շարունակվել նաև զինձառայության ընթացքում:

Մասնավորապես.

1. Պատերազմական գործողությունների հենց սկզբում զոհված Անդրանիկ Զոհրաբյանն ունեցել է տեսողական խնդիրներ, բայց ծառայել է որպես գնդացրորդ և նրան կցված է եղել ծանր զենք:
2. Զոհված զինձառայող Սաշա Վաչագանի Գալստյանի աջ աչքի տեսողությունը մինչ գորակոչվելը եղել է 10%, բուժվելուց հետո դարձել է 70%, սակայն բուժզննության ժամանակ խնդրել է իրեն պիտանի ճանաչել:
3. Մինչ ծառայությունը Վլադիմիր Աշոտի Մելքոնյանի մեկ աչքի տեսողությունը բավականին ցածր է եղել, սակայն իր կամքով է գնացել ծառայության:
4. Զոհված զինձառայող Ռոբերտ Աբաջյանի բժշկական զննությունների արդյունքում բացահայտվել է, որ նա ունեցել է հարթաթարություն և ողնաշարի ծովածություն, որի պատճառով նրան չեն թույլատրել մասնակցել վարորդական դասերին, սակայն վերջնական զննության արդյունքում Ռ. Աբաջյանը պիտանի է ճանաչվել և 2015թ. հունվարի 21-ին գորակոչվել ԼՂ Մարտակերտի գորամաս: Զորակոչվելուց հետո 10 օր նրան զինվորական կոշիկներ չեն հատկացրել եւ իր ունեցած բարակ կոշիկներով է եղել: Ֆիզիկական վարժանքներ անելու ժամանակ հաճախ է զանգատվել ողնաշարի ցավերից եւ նշել, որ անիմաստ է նույնիսկ բուժկետ դիմել, քանի որ այնտեղ միայն «պարացետամոլով են նման դեպքերում բուժում»:
5. Զոհված զինձառայող Արամայիս Գրիգորի Միքայելյանը ունեցել է հարթաթաթություն, ոսկորների կորություն, կրծոսկրի դեֆորմացիա, որի պատճառով զինվորական կոշիկներ կրելիս ոտքերը մշտապես այտուցվել են: Մայրը բարբերաբար դեղորայք է ուղարկել որդուն:

6. Զոհված զինծառայող Գևորգ Գազիկի Վարդանյանը, որը ծառայել է որպես գնդացրորդ, մինչ ծառայությունը ունեցել է թնի երկու կոտրվածք և հարթաթություն: Անցել է բուժզննություն, սակայն ճանաչվել է ծառայությանը պիտանի:
7. Զոհված զինծառայող Ադամ Խաչատուրի Սահակյանը մինչ զորակոչվելը ունեցել է ալերգիա: Ծառայության ընթացքում ունեցել է հայմոռիտ, սակայն բուժումներ չի ստացել, միայն արձակուրդի ընթացքում ծնողները սեփական միջոցներով իրականացրել են նրա բուժումը:
8. Զինծառայող Բագրատ Արթուրի Ալեքսանյանը ունեցել է գիրության խնդիր (120 կգ), որի պատճառով 2013թ. 1 տարով տարկետում է ստացել, սակայն 2015 թ-ին զորակոչվել է զինվորական ծառայության:
9. Մհեր Արամայիսի Երզնկյանն ունեցել է սրտի առիթմիա, ծնկի ցավ, ողնաշարի թեքություն: 2 անգամ մինչև 1 տարի ժամանակով տարկետում է ստացել: 2016թ. ձմեռային զորակոչի ժամանակ դիմել է զինկոմիտեի խնդրելով, որ իրեն զորակոչեն, անկախ իր առողջական խնդիրներից: Ճանաչված է եղել սահմանափակումով զինծառայություն, սակայն ինքն ամեն կերպ փորձել է ցույց տալ, որ առողջ է, խնդիրներ չունի և մասնակցել է ֆիզիկական վարժանքերին:
10. Սարգիս Արմենակի Սահակյանն ունեցել է դիմաճնոտային վիրահատության կարիք, որի կապակցությամբ տրամադրել են տարկետում, սակայն վերջինս հրաժարվել է տարկետումից եւ զորակոչվել: Ծառայության ընթացքում եղել են ծամելու հետ կապված խնդիրներ:
11. Զոհված զինծառայող Արման Մեյրանի Անդրասյանի մոտ զորակոչի ընթացքում բուժզննության ժամանակ թոքի վրա հայտնաբերել են կոշտուկ, սակայն զորակոչել են առանց առողջական խնդիրը լուծելու:
12. Զոհված զինծառայող Ժորա Եսայանը ծառայության ընթացքում հիվանդացել է թոքաբորբով, ջրծաղիկով: Մի քանի անգամ բուժում է ստացել հոսպիտալում եւ զորամասի բուժկետում: Դիրքերում նկարված բոլոր լուսանրակարերում Ժորա Եսայանը հողաթափերով է եղել, որից ծնողները ենթադրում են, որ չի կարողացել կրել ստանդարդ կոշիկ:
13. Զոհված զինծառայող Դավիթ Ռազմիկի Հայրապետյանը սկզբնական շրջանում Արմավիրի ուսումնական զորամասում ծառայելու ժամանակ հիվանդացել է թոքաբորբով, արձակուրդի ժամանակ չափազանց հյուծված է եղել եւ

դժվարությամբ է շնչել: 10-օրյա արձակուրդի ընթացքում ծնողները փորձել են բուժել նրան, սակայն դեռևս ամբողջությամբ չապաքինված, նրան տեղափոխել են Մատաղիսի գորամաս: Նա ծառայել է որպես տանկի նշանառու:

14. Զոհված զինծառայող Հայկ Սամվելի Մինասյանը ծառայության ընթացքում հիվանդացել է թոքաբորբով, որի համար տրամադրվել է 20-օրյա արձակուրդ տնային պայմաններում բուժում ստանալու համար:

15. Զոհված զինծառայող Նորիկ Զավենի Սարգսյանը զինծառայության ընթացքում պարբերաբար հիվանդացել է:

Այսպիսով, 61 զոհված զինծառայողներից առնվազն 15-ը ունեցել են առողջական խնդիրներ:

Վերլուծելով մահացած զինծառայողների հարազատների կողմից տրամադրած տեղեկությունները մինչ գորակոչվելը եւ զինվորական ծառայության ընթացքում իրենց հարազատների առողջական խնդիրների վերաբերյալ՝ նրանց առողջական խնդիրները կարող ենք դասակարգել ըստ հետևյալ հիվանդությունների.

- սուր շնչառական հիվանդություն,
- աչքի հիվանդություններ՝ տեսողական խնդիրներ,
- ոտնաթաթի ձևափոխումներ,
- ոսկրային համակարգի հիվանդություններ,
- սրտային հիվանդություն,
- ալերգիկ հիվանդություն,
- դիմաճնոտային հատվածի խնդիրներ:

Նշված 15 զինծառայողներից 5-ը մինչ գորակոչը ունեցել են միաժամանակ 2 կամ ավելի առողջական խնդիրներ, չնայած դրան՝ ծառայել են առաջնագծում:

Հարազատների կողմից ներկայացրած տեղեկությունների համարձայն՝ կարելի է եզրակացնել, որ խնդրահարույց է եղել նաև առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկների գորակոչը, քանի որ նրանցից շատերը շարունակել են առողջական խնդիրներ ունենալ նաև զինծառայության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով 2016 թ-ի ապրիլի 2-5-ը պատերազմական գործողությունների հետեւանքով եւ ապրիլի 6-30-ը հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահացած զինծառայողների մահվան հանգամանքների վերաբերյալ ձեռք բերված տվյալները՝ կարող ենք եզրակացնել.

1. Զոհված զինծառայողների հարազատները պատշաճ իրազեկված չեն իրենց հարազատների զոհվելու հանգամանքների եւ պատճառների մասին,
2. պատերազմական գործողությունների հետեւանքով զոհվելու պատճառների թվում են զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված բազմաթիվ թերություններ եւ բացթողումներ՝ զինամթերքի ոչ պատշաճ մատակարարում, հետախուզական տվյալների ոչ ժամանակին օգտագործում, զինտեխնիկայի անսարքություն,
3. անհատական անվտանգության միջոցները պատշաճ ապահովված չեն,
4. ապահովված չէ պատշաճ բժշկական ծառայությունը,
5. առողջական լուրջ խնդիրներ ունեցող զինծառայողները ներգրավված են մարտական բարձր պատրաստվածություն պահանջող զինծառայության մեջ,
6. որոշ զոհված զինծառայողների հարազատներ ունեն դիակների նույնականացման վերաբերյալ խնդիրներ:

Ելնելով նշված եզրակացություններից՝ գտնում ենք, որ.

1. ՀՀ պաշտպանության նախարարությունը պետք է իրականացնի ծառայողական քննություն ապրիլյան պատերազմական գործողությունների ընթացքում եւ հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահացած, զոհված զինծառայողների մահվան հանգամանքների ուղղությամբ, եզրակացությունները եւ ուսումնասիրության արդյունքները տրամադրի հարազատներին,
2. ՀՀ կենտրոնական զինվորական դատախազությունը, ՀՀ քննչական կոմիտեն պետք է հարուցեն քրեական գործեր
- զինտեխնիկայի, բուժօգնության, բժշկական սպասարկման տեխնիկայի անսարքությունների փաստերով,

- զինամթերքի, զինծառայողների անհատական պաշտպանության միջոցների բացակայության կամ ոչ պատշաճ մակարդակի ապահովման փաստերով,
 - ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրման հետեւանքով մահվան փաստերով,
 - առողջական լուրջ խնդիրներ ունեցած զինծառայողներին զորակոչելու փաստերով
3. ՀՀ ԱԺ պաշտպանության, անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովը պետք է կազմակերպի հանրային լսումներ ապրիլյան պատերազմի ժամանակ եւ ապրիլյան պատերազմի հետեւանքով զոհված զինծառայողների մահվան հանգամանքերի թեմայով,
4. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը պետք է իրականացնի ուսումնասիրություն ապրիլյան պատերազմի հետեւանքով զոհված զինծառայողների մահվան հանգամանքների եւ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ գլխավոր շտաբի կողմից իրենց պարտավորությունների կատարման վերաբերյալ:

ՀԱՎԵԼՎԱԾ. Ապրիլի պատերազմական գործողությունների եւ հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով զոհված, մահացած զինծառայողների եւ այդ ժամանակահատվածում բարձրաձայնված խնդիրների վերաբերյալ լրատվական աղբյուրները

1. <http://www.tert.am/am/news/2016/04/02/wounded-transported/1981829>
2. <http://168.am/2016/04/06/619825.html>
3. <http://life.panorama.am/hy/news/2016/04/06/ohanyan/465027>
4. <http://news.am/arm/news/320957.html>
5. http://www.azatutyun.am/content/article/27672413.html?utm_source=dlvr.it&utm_medium
6. <http://www.aravot.am/2016/05/06/688864/>
7. <http://168.am/2016/05/20/638802.html>
8. <http://galatv.am/hy/tvprograms/videos/news19-13/>
9. <http://razm.info/81497>
10. <http://galatv.am/hy/tvprograms/videos/news146716/>
11. <http://www.aravot.am/2016/04/13/679462/>
12. <http://openblog.am/?p=5074>
13. <http://news.am/arm/news/324399.html>
14. <http://news.am/arm/news/322349.html>
15. <http://www.aravot.am/2016/05/10/689930/>
16. <http://yerkirmedia.am/1political/sahman-arajnagic-eahk-hradadar-xaxtum/>
17. <http://news.am/arm/news/325582.html>
18. <http://yelaket.am/?p=3117&l=am>
19. <http://www.azatutyun.am/archive/news/20160402/2031/2031.html?id=27649919>
20. <http://168.am/2016/04/04/618745.html>
21. <http://news.am/arm/news/320632.html>
22. <http://civilnet.am/2016/04/05/armenian-azerbaijani-losses/#.VwS9z5yLTcd>
23. <http://yelaket.am/?p=3344&l=am>
24. <http://galatv.am/hy/news/147401/>
25. <http://zham.am/am/news/62099.html>
26. <http://shamshyan.com/hy/article/2016/05/05/84348/>

27. <https://armenpress.am/arm/news/842857/surb-hovhannes-ekexecum-lexi-unecav-avag-leytenant.html>
28. <http://168.am/2016/04/07/620423.html>
29. <http://www.tert.am/am/news/2016/04/06/ohanian2/1984880>
30. <http://news.am/arm/news/321007.html>
31. <http://www.mil.am/hy/news/3974>
32. <http://razm.info/82098>
33. <http://www.tert.am/am/news/2016/04/07/artsrn/1985648>
34. <http://www.tert.am/am/news/2016/04/07/arcrun-2/1985678>
35. <http://168.am/2016/04/07/620169.html>
36. <http://news.am/arm/news/321123.html>
37. <http://armedia.am/arm/news/32374/121-viravorneric-5-i-vitchaky-tsayrahex-tsanr-e-ardzanagrvel-e-mahvan-1-depq.html>
38. <http://civilnet.am/2016/04/08/nagorno-karabakh-killed-soldiers-names/#.VzG0cdJ97cc>
39. <http://galatv.am/hy/news/144643/>
40. <http://razm.info/82246>
41. <http://razm.info/82315>
42. <http://www.aravot.am/2016/04/07/676912/>
43. <http://news.am/arm/news/321175.html>
44. <http://armtimes.com/hy/read/83165>
45. <http://hayeli.am/article/865242>
46. <http://hraparak.am/?p=110885&l=am%2Fhramanatarin+chi+lse+chi+nahanjel+e%D6%82+nra+het+minche%D6%82+verj+payqarel+e+fotosharq+tesanyut>
47. <http://www.aravot.am/2016/04/06/676143/>
48. <http://news.am/arm/news/323240.html>
49. <http://www.azatutyun.mobi/a/27678667.html>
50. <http://www.lragir.am/index/arm/0/interview/view/130795>
51. <http://armlur.am/516980/>
52. <http://hetq.am/arm/news/67196/talishum-nahatakvats-gyumreci-avag-leytenant-hrach-galstyany-spasum-er-arajnekin.html>
53. <http://168.am/2016/04/15/623935.html>

54. <http://newsbook.am/?p=79740/chi+lqel+posty+minchev+verj+krvelvo%D6%82+herosabar+zohvel+e+patmum+en+xizaxvo%D6%82+anvax+herosneri+masin&l=am>
55. <http://www.azatutyun.am/content/article/27672932.html>
56. <http://www.lin.am/1888643.html>
57. <http://www.yerkir.am/news/view/106573.html>
58. <https://www.youtube.com/watch?v=mwo0oO-f6vg>
59. <http://galatv.am/hy/news/16-18-2/>
60. <http://168.am/2016/04/24/627676.html>
61. <http://galatv.am/hy/news/147940/>
62. http://www.azatutyun.am/content/article/27682267.html?utm_source=dlvr.it&utm_medium
63. <http://www.aravot.am/2016/04/17/680955/>
64. <http://hetq.am/arm/news/67481/gevorgy-parz-erazanqner-uner.html>
65. <http://news.am/arm/news/322636.html>
66. <https://www.youtube.com/watch?v=E18flH429XQ>
67. <http://www.aravot.am/2016/04/15/680600/>
68. <http://www.lragir.am/index/arm/0/country/view/131156>
69. <http://www.aravot.am/2016/05/18/693189/>
70. http://www.azatutyun.am/content/article/27672413.html?utm_source=dlvr.it&utm_medium
71. <http://medialab.am/news/id/6907>
72. <http://galatv.am/hy/news/147084/>
73. <http://www.lragir.am/index/arm/0/politics/view/131487>
74. <http://newsbook.am/?p=80846%2Fkextot+heryuranq+evoch+mi+kerp+chi+hamapatasxanum+irakanutyany+arcrun+hovhanisyan+&l=am>
75. <http://www.epress.am/2016/04/22/%D5%B0%D5%A5%D6%80%D5%B8%D5%BD%D5%A1%D6%81%D5%A1%D5%AE-%D5%A3%D5%B6%D5%A4%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A8-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%AE%D5%B8.html>
76. <http://armlur.am/520482/>

77. <http://168.am/2016/04/25/628540.html>
78. <http://armtimes.com/hy/read/84238>
79. <http://analitik.am/news/view/298187>
80. <http://www.lragir.am/index/arm/0/country/view/131763>
81. <http://yelaket.am/?p=4285&l=am>
82. <http://news.am/arm/news/324395.html>
83. <http://news.am/arm/news/324400.html>
84. <http://nkrmil.am/main/am/newsMore1317.html>
85. <http://168.am/2016/04/25/628819.html>
86. http://www.azatutyun.am/content/article/27697773.html?utm_source=dlvr.it&utm_medium
87. <http://www.tert.am/am/news/2016/04/27/ceasefire-death/2002942>
88. <http://nkrmil.am/main/am/newsMore1316.html>
89. <http://newsbook.am/?p=81152%2Fhakarakordy+xuchapi+mej+e+haykakan+koxmy+het+e+gravelvorosh+taracqner&l=am>
90. <http://shabat.am/index.php?m=prod&aid=45377>
91. <http://168.am/2016/04/26/629221.html#.Vx9ZNGMt3Cs.facebook>
92. <http://yerkirmedia.am/1political/sahman-arajnagic-eahk-hradadar-xaxtum/>
93. <http://www.aravot.am/2016/04/26/684843/>
94. <http://iravaban.net/125333.html>
95. <http://nkrmil.am/main/am/newsMore1314.html>
96. <http://armlur.am/522110/>
97. <http://galatv.am/hy/news/147822/>
98. <http://168.am/2016/04/27/629823.html>
99. <http://newsbook.am/?p=81099%2Fzangov+en+horyvordu+mahvan+lury+haytnel+tigrany+horom+gyuxic+er&l=am>
100. <http://yerkirmedia.am/social/sahman-dirqer-gurgen-hovhannisyan/>
101. <http://news.am/arm/news/324823.html>
102. <http://nkrmil.am/main/am/newsMore1320.html>
103. <http://www.lragir.am/index/arm/0/country/view/131514>
104. <http://nkrmil.am/main/am/newsMore1319.html>

105. <http://civilnet.am/2016/04/30/insurance-of-peace/#.VycNO9SLTce>
106. <https://www.chathamhouse.org/expert/comment/four-day-battle-over-nagorny-karabakh-may-be-prelude-new-war>
107. <http://blognews.am/arm/news/365078/>
108. <https://www.chathamhouse.org/expert/comment/violence-nagorny-karabakh-reflection-azerbaijan-s-security-dilemma>
109. <http://razm.info/83205>
110. <http://www.armworld.am/detail.php?paperid=5304&pageid=161493&lang>
111. <http://www.mediamax.am/am/news/karabakh/18145/>
112. <http://yelaket.am/?p=4736&l=am>
113. <http://hraparak.am/?p=110496&l=am%2F>
114. <http://news.am/arm/news/325105.html>
115. <http://www.aravot.am/2016/05/16/692517/>
116. <http://168.am/2016/07/15/661696.html#.V4fvpni2648>
117. <http://168.am/2016/05/11/635172.html>
118. <http://168.am/2016/05/25/640465.html>
119. <http://hetq.am/arm/news/68556/qartezic-durs-zohvats-zintsarayoxi-hetqerov.html#.V2FaDgO4HrY>
120. <http://www.pastinfo.am/hy/news/2016/05/09/%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A1%D5%AE-%D6%83%D5%B8%D5%AD%D5%A3%D5%B6%D5%A4%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A8-%D5%A9%D5%B8%D6%82%D5%B5%D5%AC-%D5%B9%D5%AB-%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A8%D5%B6%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB%D5%B6-%D5%B0%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AC-%D5%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%BF%D5%AB%D6%81/397935>

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը

ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

Ինչով ենք մենք զբաղվում

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գործում է հետևյալ ոլորտներում՝ մարդու իրավունքների պաշտպանություն, շահերի պաշտպանություն և քաղաքացիական նախաձեռնություններ, խաղաղասիրություն: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քննարկումների, սեմինարների, հանրային լսումների, (համատեղ) ակցիաների, դասընթացների, իրավական ակցիաների, քաղաքացիական մասնակցության, հրապարակումների, ուսումնասիրությունների/հետազոտությունների, մոնիթորինգի, լոբբինգի, ՁԼՄ-ների ներգրավման, հեռուստատեսային և ռադիո քննարկումների ու բանավեճերի միջոցով իրականացնում է իր գործունեության ոլորտները:

Ինչու դիմել մեզ

Եթե խախտվել են Ձեր իրավունքներն ու ազատությունները պետական մարմինների կողմից, և Դուք իրավական խորհրդատվության կարիք ունեք, որը տրամադրվում է անվճար:

Ինչպես գտնել մեզ

Դուք կարող եք այցելել մեր գրասենյակ, զանգահարել, կապ հաստատել էլեկտրոնային նամակագրությամբ, մեր փոստային հասցեին ուղարկել նամակներ անձամբ կամ Ձեր բարեկամների միջոցով՝ մեզ տեղեկացնելով իրավական խնդիրների վերաբերյալ:

Մեր հասցեն Վանաձորում՝

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59

հեռ՝ +374 /322/ 4 22 68

բջջ. 094 042268

անվճար թեժ գիծ՝ 0 8000 12 11

կայքէջ՝ www.hcav.am

էլ. հասցե՝ hcav@hcav.am

Մեր հասցեն Երևանում՝

ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 3 շենք, բն. 21